«16-ամյա եղբորս առեւանգեցին, մի քանի ժամ անց զանգեցին ու հսկայական գումար պահանջեցին: Ժամ առ ժամ գումարի չափն ավելանում էր: Առավոտյան եղբորս դիակը գտանք Բաքվի գբոսայգիներից մեկում: 16-ամյա պատանուն, որ կյանքում ոչ ոքի վնաս չէր պատճառել, հասցրել էին դանակի 7 հարված», ասում է Ավանեսովան:

«Բաքվեցի համերկրացիների միության նախագահ» Ռոբերտ Խաչատրյանը փաստում է, որ հայերի զանգվածային սպանդը Ադրբեջանի կառավարությունն էր կազմակերպել, մինչդեռ կային հասարակ ադրբեջանցիներ, ովքեր դեմ էին:

«Սեւ հունվարի» օրերին հայերի հեռախոսներն անջատված էին, մարդասպանները ցուցակ ունեին ու գիտեին, թե որոնք են հայերի բնակարանները», ասում է Խաչատրյանը:

«Սեւ հունվարի» սարսափի եւս մեկ ականատես **Սոնյա Կասպարովան** հիշում է, որ հունվարի 14-ին Բաքվի փողոցներում տանկեր կային, աղջիկներին ծեծում ու մեքենաներով տանում էին: Թեպետ անցել է 21 տարի, սակայն Կասպարովան չի մոռացել տղամարդու՝ ատելությամբ ու զզվանքով լցված ձայնը, որ գոռում էր. «Մահ հայերին»: «Տեսել եմ, թե ինչպես էին հայերին պատշգամբներից ցած նետում: Դրսում սարսափելի ցուրտ էր, մի կերպ փախանք ու հասանք կայարան, որ գայինք Երեւան: Գնացքը ուշանում էր: Գետնին նստած էին տարեց հայ կանայք՝ ոտաբոբիկ էին, ատամները ջարդված: Նրանք վախից ու ցրտից դողացնում էին»:

Երկու ամսից լույս կտեսնի ադրբեջանահայերի ասամբլեայի նախագահ **Գրիգորի Այվազյանի** հեղինակած «Ադրբեջանցի թուրքերի նացիզմը: Ադրբեջանահայերի ցեղասպանությունը. Հայացք ներսից» խորագրով գիրքը, որը կպատմի 1990-ին Ադրբեջանում իրականացված հայերի ջարդերի մասին:

«Գիրքը ներսի հայացքով է ներկայացնում հայկական ջարդերը եւ պատմում է ողջ ճշմարտությունը դրանց մասին», ասաց Այվազյանը՝ հավելելով, որ գիրքը կհրատարակվի ռուսերեն լեզվով. նախատեսվում է թարգմանել նաեւ անգլերեն եւ ադրբեջաներեն:

Բաքվի փախստականների խնդիրներով զբաղվող «Մեր տունը Հայաստանն է» կազմակերպության նախագահ **Նիկոլայ Բաբաջանյանը** պատմում է, որ «սեւ հունվարի» օրերին դաժանաբար սպանվել է 270 հայ, Ադրբեջանում կոտորածներից սպանված հայերի թիվը գերազանցում է 400-ը:

«Ինչու մարդասպանները մինչեւ օրս չեն պատժվում: Ինչու մեր պետությունը չի պահանջում, որ բացվեն արխիվները, ուսումնասիրվեն փաստաթղթերը»: Բաբաջանյանի ներկայացրած փաստերի համաձայն՝ Բաքվում հայերը թողել են 123.000 բնակարան, ադրբեջանցիները Երեւանում թողել են 32.000 բնակարան:

Թեպետ Բաքվի ջարդերից անցել է 21 տարի, սակայն փախստականների հարցերը դեռեւս լուծված չեն: Նրանցից շատերը բնակարանի, աշխատանքի խնդիր ունեն, սակայն գլխավոր հարցը ազատ տեղաշարժման իրավունքն է: Փախստականներից շատերը Հայաստանում ամուսնացել են, զավակներ ունեցել, սակայն նրանց անձնագրային խնդիրները լուծված չեն: Ադրբեջանահայերից շատերը չեն կարողանում փոխել իրենց ազգանունները: «Ազգանվան «յան» վերջավորության համար անհրաժեշտ են ծննդյան վկայական ու հսկայական գումար: Ջարդերի ժամանակ շատերը չեն էլ հասցրել իրենց ունեցվածքը վերցնել, շատերի ծննդյան վկայականներն են կորել: Եթե անգամ լիներ, շատերն ուղղակի հնարավորություն չունեն պատկառելի գումարը վճարելու, մինչդեռ Ադրբեջանում փախստականները նման խնդիր չունեն», ասաց Բաբաջանյանը:

Իրանահայ համայնք

«Անի» միության 30-ամյակի տոնակատարություն

«Իրանահայեր»- կայքէջ

Հունվարի 13-ի երեկոյան, Հ. Ուս. Չհարմահալ միության Հ. Թումանյան սրահում, նշվեց Հայ կին միության կից Թեհրանի Սարդարապատ (Հեշմաթիե) քաղաքամասում գործող «Անի» միության հիմնադրության եւ գործունեության 30-ամյա հոբելյանը:

Հոբելյանական միջոցառմանը ներկա էին՝ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսյանը, Իրանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանը, դեսպանության խորհրդական Սուրեն Գասպարյանը, Իրանի Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Տ. Նշան արք. Գարաքեհյանը, Իրանի Հայ Ավետարանական Եկեղեցու հոգեւոր հովիվ Վեր. Սերգեյ Շահվերդյանը, Սարդարապատ քաղաքամասի ծխատեր Տ. Մաշտոց քհն. Խաչատրյանը, Թ. Հ. Թ. Պատգամավորական ժողովի ու Թեմական խորհրդի եւ միությունների ներկայացուցիչներ, վերջերս կայացած հոգեւոր եւ կոմիտասյան երգերի համերգի կատարողներ՝ Գեւորգ ավ. սրկ. Հաճյանն ու Տաթեւիկ Արթինյանը եւ այլ հրավիրյալներ:

Թունյան դպրոցի, Սասուն մանկապարտեզի շինարարական վերջին վիճակը

Թեհրանի հայոց Թեմական խորհրդի բացատրությամբ նորակառույց դպրոցի երկաթե կմախքի 90 տոկոսը արդեն պատրաստ է եւ ընդհանուր գործի մոտ 40 տոկոսը արդեն իրականացված է:
շենքի ընդհ. հատակագծի հաստատման համար պիտի ասել, որ հատակագիծը քաղաքապետարանին հանձնվելուց առաջ՝ դպրոցների հարցով ուսումնադաստիարակչության նախարարության կողմից վերահասու կենտրոնը կատարելապես ստուգում է հատակագծերը, որոնք հաստատելուց հետո՝ նոր հանձնում է քաղաքապետարանին եւ քաղաքապետարանը վերջնական ստուգումից հետո՝ աշխատանքի արտոնություն է տալիս: Եւ այդ արտոնությունը մեզ տրվեց հունիսի կեսերին եւ աշխատանքը իր կառուցման փուլն անցավ: Սասուն մանկապարտեզը օժտված է 7 դասարանով, իսկ Թունյան դպրոցը՝ 10 դասարանով, ավելացնելով համակարգչի դասարան, տարրալուծարան ու գրադարան եւ ունեն հարմարավետ բակեր: Դասարաններից յուրաքանչյուրը 40 քառ. մետր է, որը տեղավորելու է 30-ից 35 աշակերտների: Դպրոցը կատարելապես ունենալու է արդիական ջեռուցիչ, օդափոխիչ ու զովացուցիչ: Նորակառույց շենքի ներքնահարկում թե՛ մանկապարտեզի բաժնում, եւ թե՛ դպրոցում սրահներ են նկատի առնվել, որում պիտի իրականանան դպրոցի տարբեր ծրագրերը եւ հանդեսները:

Նոր Ջուղայի Քանանյան եւ Կատարինյան դպրոցի շրջանավարտների սրտերի բաբախում...

«Իրանահայեր»- կայքէջ
Հունվարի 19, 2011

Հուզում, հպարտություն, տոնական տրամադրություն, նոր աշխարհ եւ նոր հոգսեր...
Ահավասիկ, այս մթնոլորտում էր, որ Հայ Մ. Մ. Արարատ միության սրահում, 2010 թ. դեկտ. 22-ին, երեկոյան ժամը 7-ին, հովանավորությամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգեն եպս. Չարյանի եւ ներկայությամբ հոգեւորականաց դասի, ազգային մարմինների, Հայ Դատի հանձնախմբի եւ միությունների ներկայացուցիչների, հայոց ազգ. դպրոցների տեսչության, ուսուցչական կազմերի եւ ծնողական խորհուրդների, շրջանավարտների ծնողների ու հարազատների, բացված հայտարարվեց Քանանյան աղջ. եւ Կատարինյան տղայոց դպրոցների 2009-2010 ուսումնական տարեշրջանի շրջանավարտների հայոց լեզվի վկայականների հանձնման եւ ավարտականի հանդիսությունը՝ նվիրված երկու դպրոցների հիմնադրության 110-ամյակին:

Ուրմիայի հայոց ազգ. Նաիրի մանկապարտեզը

2009-2010 ուսումնական տարեշրջանում Նաիրի մանկապարտեզը, որ գտնվում է Ուրմիայի ՀՕՄ-ի հովանավորության տակ, ունեցել է 4-5 տարեկան 11 աշակերտ-ուհիներ՝ իրենց դաստիարակ ունենալով տկն. Օֆելիա Սայադյանին: Առ այդ՝ անհրաժեշտ ենք համարում ձեզ ներկայացնել մի ամփոփ տարվա աշխատանքը, որը կատարվել է ,նայիրիե մանկապարտեզում. 1) Բարձր հովանավորությամբ Ատրպատականի հայոց թեմի նախկին առաջնորդ հոգելույս Նշան եպս. Թոփուզյանի եւ նախագահությամբ Ուրմիայի նախկին հոգեւոր հովիվ Տ. Անանիա աբղ. Գուճանյանի, մասնակցությամբ Ուրմիայի Հոմ-ի պատասխանատու մարմինների, ինչպես նաեւ ծնողների ու երեխաների ներկայությամբ, 2009 թվականի սեպտ. 28-ին տեղի է ունեցել ,նայիրիե մանկապարտեզի 2009-2010 ուսումնական տարեշրջանի տարեմուտը: Հայր Սուրբը փոխանցեց իր պատգամը եւ վերջում բոլորը հյուրասիրվեցին խմորեղենով ու մրգահյութով: 2) ,նայիրիե մանկապարտեզում նշվել է Հայ մշակույթի օրը, որի համար երեխաները պատրաստել էին գեղեցիկ ոտանավորներ: 3) Ամանորյայ հանդեսը եւ Ձմեռ պապիկի դիմավորման ծրագիրը տեղի է ունեցել 2009 թվականի դեկտ. 30-ին Ուրմիայի հայոց ազգային ,արամ Մանուկյանե սրահում, որին ներկա էին մեծ թվով դիտորդներ. բեմը շատ ճոխ ու գեղեցիկ էր ա½րդարված: Երեխաները պատրաստել էին Հիսուսի Ծնունդի ու եղեւնու մասին բեմադրություն եւ ուրախ երգերով, պարերով ու ոտանավորներով դիմավորեցին Ձմեռ պապիկին եւ ստացան իրենց գեղեցիկ կապոցները: 4) ,նայիրիե մանկապարտեզ է այցելել Ատրպատականի հայոց թեմի նախկին առաջնորդ հոգելույս Տ. Նշան եպս. Թոփուզյանը՝ ներկայությամբ Գործակալական խորհրդի անդամ-ուհիների, Հոմ-ից եւ ծնողական կազմից անդամ-ուհիներ :

Հայ պատանու սպանողներին դատապարտել են ընդամե՞նն 3 տարվա ազատազրկման

Ըստ որոշ լրատվական աղբյուրների, որոնց հենվելով նաեւ լուրեր են տարածել Հայաստանյան մեր գործընկերները, 2005 թ. սեպտեմբերին, Թեհրանի Արարատ մարզավանի մոտակայքում սպանված 14 ամյա Միրո Բեգիջանյանի գործով դատական վճիռն արդեն հրապարակվել է, ըստ որի ինչպես ասվում է ,իրանական լրատվամիջոցների հաղորդման համաձայն, ընդամենը երեք տարվա ազատազրկման եւ գումարային փոխհատուցման են դատապարտել մեղադրյալները: Ըստ հրապարակված դատվճռի մեղադրյալները երեքն են, որոնք դատապարտվել են ազատազրկման (երեք տարի) ու նաեւ դրամական փոխհատուցման (դիե): Բեգիջանյան ընտանիքի դատապաշտպան Հովիկ Բեհբուն ասաց. «Այդ մասին դեռ ինձ եւ իմ պաշտոնական գրասենյակին որեւէ նորութիուն չի փոխանցվել դատարանից»:

Հ. Բեհբուն ասաց. «Լուրի մասին ես նաեւ իմացել եմ մամուլից»:

Արաքս շաբաթաթերթ, Թեհրան, 06/12/2010թ

Հայաստան

«Հայաստան» Համահայկական հիմնադրամը Արցախի ջրի խնդիրները լուծելու համար հանգանակեց մոտ 21 մլն ԱՄՆ դոլար

Ավարտվեց «Հայաստան» Համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնը, որը տեց 12 ժամ և ուղիղ եթերով հեռարձակվում էր հայկական և ամերիկյան մի շարք հեռուստաընկերություններով: Հանգանակության ավարտից մոտ մեկ ժամ առաջ գումարը կազմում էր շուրջ 17 մլն ԱՄՆ դոլար: Սակայն վերջին ժամվա ընթացքում խոշոր նվիրատվություններ կատարեցին մոսկվահայ գործարար Լևոն Հայրապետյանը՝ 2 մլն ԱՄՆ դոլար, և «Viva Cell» ընկերության տնօրեն Ռալֆ Հիրիկյանը՝ շուրջ 400.000 ԱՄՆ դոլար: Ընդհանուր հանգանակված գումարը կազմեց սպասվածից ավելին՝ 20 մլն 862.733 ԱՄՆ դոլար:

Նկատենք, որ այս տարվա մարաթոնը պետք է լուծի Արցախի ջրի խնդիրը և կրում էր `«Ջուրը կյանք է» խորագիրը:

Առաջիկայում HayNews.am-ը կփորձի ընթերցողին ներկայացնել խոշոր նվիրատուների ցանկը, և պարզել, թե քանի՞սն են նրանցից ներկայացնում Հայաստանը:

HayNews.am

ԳՈՐԾԱԴԻՐԸ ԲԼՈԳ Է ԲԱՑԵԼ

ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը բացել է հատուկ բլոգ (govnkr.livejournal.com), որի նպատակը կառավարության գործունեությունը եւ Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրները անմիջական մթնոլորտում ու մշտական կապի միջոցով քննարկելն է:

«Մեր առօրյա աշխատանքում մշտապես փորձում ենք քննարկել եւ հիմնային լուծումներ տալ քաղաքացիների դիմումներում հնչած խնդիրներին, սակայն անհրաժեշտ եմ համարում ավելի գործնական ու անմիջական դարձնել կապը եւ ծրագրային շփումը ԼՂՀ քաղաքացիների, ՀՀ եւ աշխարհի տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցների հետ»,- այցելուներին ուղղված նախաբան խոսքում գրում է Արա Հարությունյանը:

Արցախցիներից բացի՝ այդտեղ իրենց առաջարկներով եւ վերլուծություններով կարող են հանդես գալ նաեւ հայաստանաբնակ ու սփյուռքի մեր հայրենակիցները:

Վարչապետը պատրաստակամություն է հայտնել արձագանքելու բոլոր արժեքավոր դիտարկումներին ու գաղափարներին:

Ինչպես տեղեկացնում են կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, նորաստեղծ բլոգն արդեն ներկայացվել է Ստեփանակերտի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում:

ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋՅԱՆ

Լոս Անջելեսում, որտեղ ապրում էր 1991 թ.-ից ի վեր, դեկտեմբերի 23-ի վաղ առավոտյան վախճանվել է մեր գրականության նահապետներից Ստեփան Ալաջաջյանը, 86 տարեկան հասակում: Բազմաթիվ վեպերի ու վիպակների հեղինակ, որոնք ամփոփված

են «Անապատում», «Պարտություն», «Առանց հայրենիքի» եւ այլ հատորներում, Ալաջաջյանը ներկայացրել է սփյուռքահայ հայրենակարոտ մարդու տվայտանքները, առ հայրենիք ունեցած հոգեկան կապը: Սակայն նրան իսկական եւ ամուր հռչակ է բերել «Եղեգները չխոնարհվեցին» երկհատորյակը, որտեղ ներկայացրել է թուրքական յաթաղանի դեմ հայ մարդկանց ազատագրական պայքարի ցնցող դրվագներ:

Ստ. Ալաջաջյանը ծագումով զեյթունցի էր: Ծնվել է Հալեպում, 1924 թ. հունվարի 3-ին: 1946-ին ընտանիքով ներգաղթել է Հայաստան: Ավարտել է Երեւանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1953 թ.-ից սկսյալ նրա գործերը լույս են տեսել մեծ տպաքանակով, թարգմանվել եւ հրատարակվել նաեւ ռուսերեն: Ինքն էլ թարգմանել է Վ. Սարոյանից, Ժ. Պ. Սարտրից, Շեքսպիրից: Եղել է Հայաստանի գրողների միության քարտուղար: 1991 թ.-ին արտագաղթել է Մ. Նահանգներ, որտեղ հիմնել է «Համայնապատկեր» ամսագիրը:

Մեր ցավակցությունները հարազատներին:

Միջազգային

Մեթյու Բրայզան՝ Ադրբեջանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան

2010-12-30

ԵՐԵՎԱՆ, 30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման այսօր Մեթյու Բրայզային նշանակել է Ադրբեջանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան: Նշանակումը տեղի է ունեցել՝ չնայած այն հանգամանքին, որ մի շարք սենատորներ, այդ թվում դեմոկրատներ Բարբարա Բոքսերը եւ Ռոբերտ Մենենդեսը լուրջ հակազդեցություն են ցուցաբերել այս նշանակմանը: 111-րդ Կոնգրեսի վերջին օրերին կայացված որոշումը տեղի է ունենում այն անհանգստությունների ֆոնին, որ Մեթյու Բրայզան ունի բավականին սերտ կապեր ադրբեջանական կառավարող շրջանակների հետ, ինչպես նաեւ Կովկասում դիվանագիտական աշխատանքի ոչ դրական փորձ:

ՀՐԵԱ ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐԻ ԿՈՉԸ՝ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Նահանգներում եւ Իսրայելում ապրող հրեա պրոֆեսորների մի խումբ Իսրայելի կառավարությանն է դիմել Առաջին աշխարհամարտի օրերին հայերին պատուհասած ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու խնդրանքով, տեղեկացնում է «Արմինյըն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի նոյեմբերի 20-ի համարը՝ օգտվելով israelnationalnews.com կայքից:

Ըստ «Ֆիրատ նյուզ» գործակալության՝ Վաշինգտոնի «Ջորջթաուն» եւ Ռամաթ Գանի «Բար Իլան» համալսարաններից չորս պրոֆեսորներ այդ մասին նամակ են հղել երկրի վարչապետ Բենիամին Նաթանյահուին: Նամակ-խնդրանքում նաեւ կոչ է արվում նպաստելու Թուրքիայում ապրող միլիոնավոր քրդերին ինքնավարություն շնորհելու գործընթացին:

«Արդեն 26 երկրներ եւ ամերիկյան 44 նահանգներ ճանաչել են հայերի դեմ գործված ցեղասպանությունը, բայց Հոլոքոսթը ապրած Իսրայելը դեռեւս դրանց շարքում չէ», նշված է նամակում:

«ՋՈՒՂԱՅԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ ՀՈՂԻՆ ԵՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԵԼ»

Ահազանգում է Գիտության զարգացման ամերիկյան ասոցիացիան

Այս մասին գիտեն բոլորը: Այս վանդալիզմի ապացույցները տեսանելի են ամենուր եւ ամենքին, պարզապես քչերն են բարձրաձայնում, ոմանք էլ միայն բարձրաձայնում են եւ վերջ: Ջուղայի միջնադարյան հայկական գերեզմանոցը՝ հարյուրավոր խաչքարերով, վաղուց արդեն գոյություն չունի. Ադրբեջանը «լիարժեքորեն տնօրինում է Նախիջեւանը»:

Ինչպես փոխանցում է Panorama.am-ը՝ Գիտության զարգացման ամերիկյան ասոցիացիան (AAAS), կիրառելով աշխարհատարածքային տեխնոլոգիաներ, (Geospatial Technologies), ուսումնասիրել է Նախիջեւանում գտնվող Ջուղայի հայկական միջնադարյան գերեզմանոցի՝ արբանյակից արված լուսանկարները: Ասոցիացիայի աշխատակից Սյուզան Վոլֆինբերգերը նշել է. «Արբանյակի միջոցով 2003 թ.-ին Ջուղայի գերեզմանոցում արված լուսանկարների եւ 2009-ի մայիսին արված լուսանկարների հետազոտությունը ցույց է տալիս, որ դեռ 2003-ին Ջուղայի գերեզմանոցում 15-16-րդ դարերի հնության հարյուրավոր խաչքարեր կային, իսկ 2009 թ.-ի լուսանկարներում դրանց մի մասն անհետացել է: Աշխարհատարածքային տեխնոլոգիաների կիրառման միջոցով արված ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրել, որ խաչքարերը տեղափոխվել են հողը փորող հատուկ սարքերի միջոցով, իսկ հետո հողի այդ հատվածները պարզապես հավասարեցվել են»:

Հիշեցնենք, որ Ջուղայի գերեզմանոցի խաչքարերի ոչնչացման վերջին դեպքն արձանագրվել է 2005-2006թթ.-ներին: Խաչքարերը ջարդել են ծանր շինարարական տեխնիկայի միջոցով, իսկ գերեզմանոցի ազատված տարածքը վերածվել է հրաձգադաշտի: Այս կապակցությամբ Եվրոխորհրդարանը ցանկացել է ներկայացուցչություն ուղարկել՝ ուսումնասիրելու Ջուղայի գերեզմանոցում կատարված բարբարոսությունները, սակայն Ադրբեջանի իշխանությունները կտրականապես մերժել են այս նախաձեռնությունը:

2003-2006 թթ. հրապարակված իր զեկույցներում Հուշարձանների եւ տեսարժան վայրերի պահպանման

միջազգային խորհուրդը (ICOMOS) նույնպես անդրադարձել է Ջուղայի գերեզմանոցի խաչքարերի ոչնչացման հիմնախնդրին: Հիշեցնենք նաեւ՝ ԵԱՀԿ երկրների ղեկավարների՝ Աստանայում կայացած վերջին գագաթաժողովի ընթացքում նախագահ Սարգսյանը գործընկերների առջեւ կարեւոր դիտարկումներ արեց Ջուղայի կործանված խաչքարերի վերաբերյալ:

Հասարակական

ԻՍԿ ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ԲՂԱՎԵԼ

Ավարտվեց 21-րդ դարի առաջին տասնամյակը:

Պատմություն դարձավ նաև 2010-ը՝ տարի որը լի էր հասարակական և քաղաքական վերիվայրումներով՝ միջազգային, շրջանային և հայկական ասպարեզներում:

Մեր համայնքը դրական երևույթների կողքին ականատեսը եղավ նաև բացասական լուրջ հարցերի, որոնք լուծում չստանալու դեպքում, կարող են մեզ կանգնեցնել էլ ավելի բարդ իրադրությունների առջև:

Ներհամայնքային կյանքում «վերադասավորման» ու «օպտիմալացման» ախտով տառապող կուսակցական «ազգային իշխանիկները»կրթամակարդակի զարգացման մասին մտահոգվելու փոխարեն, մեկը մյուսի հետևից փակում են հայոց ազգային դպրոցները, որոնց շարքում վերջինը եղավ «Ռոստոմ» աղջ. դպրոցը: Նույն ժամանակահատվածում ավելի բարձրացավ ոչ հայկական դպրոցներ հաճախող հայ աշակերտների թիվը:

Իսկ դատա-իրավական դաշտում «տանուլ տվինք», սրանից հինգ տարի առաջ, «Արարատ» մարզավանի դռան դիմաց, անարգ ոճրի զոհ դարձած 14-ամյա Միրո Բեգիջանյանի դատը՝ խտրական օրենքի, փաստաբանների անհավասար մրցակցության և ամենակարևորը՝ Իսլամական խորհրդարանում կրոնական փոքրամասնությանց և ի մասնավորի հայ պատգամավորների անգործունեության արդյունքում:

Եթե դպրոցների փակման հարցը աշակերտության թվի նոսրացման «պատճառաբանությամբ» հաջողում են ինչ-որ կերպ բացատրել, ապա ոչ մի կերպ չի կարելի արդարացնել Միրոյի դատավարության արդյունքը՝ Թեհրանի 113-րդ քրեական դատարանը Միրոյի սպանողներին դատապարտել է արյան գնի հատուցման և միայն 3 տարվա ազատազրկման:

ԻԻՀ Իսլամական Քրեական օրենսգրքի՝ երրորդ գրքի, Ա գլխի, առաջին բաժնի 206-ից 211-րդ հոդվածները վերաբերում են «դեսպանին»՝ սպանության դիմաց հատուցման: Նույն բաժնի 208-րդ հոդվածում ասված է. «Ով որ սպանություն գործի և հայցվոր չունենա, կամ հայցվոր ունենա, սակայն ների նրան՝ հատուցում չպահանջի, և իր արարքը հասարակության անդորրը խախտի և սարսափի մթնոլորտ ստեղծի և կամ իր և այլոց մոտ նման հանցանքի տարածման մտահոգություն առաջացնի, պատժվում է ազատազրկմամբ 3-ից 10-ը տարվա ժամկետով»:

Իսկ ծանոթագրության մեջ հավելված է. «Նման դեպքում, սպանության մեջ գործակցողը մեկից հինգ տարվա ժամկետով ազատազրկման է դատապարտվում»:

Այսինքն դատավորը, ըստ օրենքի պարտավոր է առնվազն երեքամյա ազատազրկման դատապարտել հանցագործին, նույնիսկ եթե տուժողը զուրկ լինի պաշտպանից և հարազատներից:

Այդ դեպքում հարց է առաջանում՝ Ինչու՞ հինգ տարի ձգձգվեց այս դատը, ի՞նչ էր անում դատապաշտպանը, ինչու՞ էին առաջնորդարանից քահանաներ և աշխարհիկ ներկայացուցիչներ մասնակցում դատավարության նիստերին և ամենից կարևորը՝ իրանահայության զույգ պատգամավորները ինչ էին անում Իսլամական խորհրդարանում:

Արդյո՞ք այդ բոլորը կատարվում էր միայն տուժող կողմին մխիթարելու, թե պարզապես դատավարությանը դիտորդի դեր ստանձնելու համար, որպեսզի վերջում էլ փսփսալով ասեն. «Ինչ արած, էսա որ կա, իրենց երկիրն ա, ինչ ուզում անում են»…

Իսկ ես ուզում եմ բղավել, և որքան հնարավոր է բարձր ձայնով, որ ես՝ Իրանի հայ քաղաքացիս, սիրում եմ իմ ծննդավայր երկիրը. այս երկրի սահմաններն ու անվտանգությունը պաշտպանելու համար իմ պապերի ու եղբայրների արյունն է նվիրաբերվել, իմ նախնիներն ու ժամանակակից իրանահայերը քրտինք են թափել այս երկիրը շենացնելու համար: Մենք մեր արժանավոր ներդրումն ենք ունեցել Իրանի գիտության, մշակույթի, արհեստի, արվեստի և ճարտարարվեստի զարգացման մեջ: Ուստիև իմ՝ հայ մարդուս, անվիճելի և անառարկելի իրավունքն է, որպես Իրանի լիիրավ քաղաքացի, հավասար կերպով պաշտպանվել և օգտվել այս երկրի բոլոր բարիքներից և ինչպես ԻԻՀ Սահմանդրության 3-րդ հոդվածի 9-րդ կետում է շեշտված պահանջում եմ՝ «Անտեղի խտրականությունների վերացում և բոլորի համար արդարացի պայմանների ապահովում» ու նաև նույն հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ «… բոլորի համար արդարության և օրենքի առջև իրավահավասարության ապահովում»:

Պահանջում եմ, և իրավունք եմ վերապահում ինձ պահանջելու, քանզի ես թափառաշրջիկ ու քոչվոր ազգի զավակ չեմ: Ես այս երկիրը օտար չեմ համարել ու նրան վերաբերվել եմ ինչպես իմ սեփական երկիրը, թեև դարերի ընթացքում միշտ չէ, որ ճիշտ է գնահատվել իմ ներդրումը և ինչ-ինչ պատճառներով ոտնահարվել է իմ բնական և ամենատարրական իրավունքները: Սակայն ես դիմացել եմ, ու դիմացել եմ այն համոզումով և հույսով, որ մի օր այս երկրում օրենքի առջեւ հավասարության սկզբունքը պիտի սկսի աշխատել և Իրանի բոլոր քաղաքացիները օրենքի առջեւ պիտի լինեն հավասար և քրեական պատասխանատվության կանչվեն նույն սկզբունքով՝ անկախ սեռից, ցեղից՝ (ռասայից), մաշկի գույնից, լեզվից, կրոնից, դավանանքից և այլևայլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային և կրոնական փոքրամասնությանը

պատկանելուց կամ չպատկանելուց և բոլոր այլ դրություններից, որոնք կարող են անհատին տարբերել մեծամասնությունից կամ հասարակության որոշ հատվածից:

Իրանի իսլամական հեղափոխությունից հետո, ինչպես ողջ երկրում, նույնպես և հայկական համայնքում դադարեց միաբևեռ և ճահճային իրավիճակը՝ ծաղկեցին հայացքներ, ծնվեց բազմազանություն, հիմնվեցին միություններ, կազմակերպություններ և ամենակարևորը՝ մամուլ: Քաղաքական և հասարակական զարգացման մեծ հույսեր էր փայփայվում, սակայն, դժբախտաբար, այնքան մեզ մոլորեցրին «քաղաքական խաղերով», որ տանուլ տվինք և մոռացանք տեր կանգնել մեր սոցիալական և համայնքային իրավունքներին: Իրանահայ իրարահաջորդ պատգամավորները, որպես «ազնիվ ու հնազանդ քաղաքացիներ» մասնակցեցին Իսլամական խորհրդարանի բոլոր շրջանների նիստերին ու երեսուն տարի՝ առանց ընդմիջումի միայն իրենց խմբակային շահերի հետևից վազեցին: Արդյունքում՝ Միրոյի դատարանում դատավորը հայտարարում է մուսուլման-ոչ մուսուլման ԱՆՀԱՎԱՍԱՐ դրույթի մասին, ինչի համար դատավորը՝ ինքը չէ որ պատասխանատու է, այլ երկրի օրենսդիր մարմինը և ամենից առաջ խորհրդարանի հայ պատգամավորները:

Ուստի պարզ հարց է առաջանում. Եթե Միրոյի ընտանիքը դատապաշտպան չունենալու դեպքում ևս նույն արդյունքին պիտի հասներ, այն էլ հինգ տարի դատական քաշքշուկից հետո, այդ դեպքում մեր ինչի՞ն են պետք Իսլ. խորհրդարանի հայ պատգամավորները…

Մովսես Քեշիշյան
«Արաքս» շաբաթաթերթ համար 203

Դաշնակցութիւնը ծերանում է՞, թե իր հարցերն են լուծվե՞լ թուրքերի հետ

Թեհրանում հրատարակվող ՀՅԴ պաշտոնաթերթ «Ալիք» օրաթերթը, 25 դեկտեմբերի 2010 թվի իր համարում, «120-ամեայ անշեղ ուղին» հոդվածաշարի հերթական հոդվածով՝ «Հ.Յ. Դաշնակցութիւնը՝ Հայ Դատի վերանորոգ պահանջատիրութեան առաջնորդի դերում» վերնագրի ներքո, վիքիլիքսյան քողազերծումների ոգով տոգորված 35-ամյա որոշ «գաղտնիքներ բացահայտեց» ընթերցողի համար:

Պարզվում է.

- 1915թ. Հայոց Ցեղասպանությունից հետո, մինչև 1975 թվականը, Հայ Դատի առնչությամբ որևէ գործնական աշխատանք չի տարվել:

- ՀՅԴ նախաձեռնություններն իրագործման հնարավորություն ունեցան «խրուշչովեան շրջանի քաղաքականութեան մեղմացումով»:

- Մինչև 1975թ. այսինքն՝ Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի (ԱՍԱԼԱ) ծնունդը, «Հայ Դատը և Հայոց Ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչել տալու նպատակով՝ սփիւռքահայ քաղաքական միտքը պայքարի առաջին պլան-ում չուներ «Թուրքիայի կառավարութեան դատապարտման և պատասխանատուութեան կանչելու հարցը», այլ միայն դրանից հետո է ինչ «առաջին պլան է մղում» այն:

- Դասական կուսակցությունների, այդ շարքում առաջինը ՀՅԴ-ի, գործելաոճը Հայ Դատի հարցը մտցրել էր փակուղի:

- «Հայոց Ցեղասպանության արդարադատ մարտիկներ» խումբը պատկանում էր ՀՅԴ-ին:

- ՀՅԴ-ն «Հայ հեղափոխական բանակ» անունը ժամանակին օգտագործեց «Արդարադատ մարտիկներ»-ի երկու-երեք գործունեության համար հակակշռելու Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի մեծ հնչեղություն ունեցող անվանն ու գործունեության, որն այնպես էլ չհաջողվեց:

- Որ եթե հայկական որևէ այլ կազմակերպություն չբարձրացնի ինչ-որ մի արդար հարց, այդ հարցը ՀՅԴ-ի կողմից երբեք առաջին պլան չի մղվելու, «ուստի խնդրում ենք չխաչաձևել…»:

- Որ Լիսբոնի հինգը հրկիզվեցին անմեղ տեղը, որովհետև ՀՅԴ-ին արյուն էր պետք: Որ 1983թ.-ից հետո Լիսբոնի հինգի «ինքնահրկիզումով», իր աշխատանքները դադարացրեց նաև «Արդարադատ մարտիկներ»-ի խումբը: Եվ դրանից հետո, ամեն տարի ՀՅԴ-ի կողմից, Անթիլիասին ենթակա հայոց եկեղեցիներում, կայանում է հոգեհանգստյան արարողություն Լիսբոնի հինգի և ինչու ոչ նաև «Հայոց Ցեղասպանության արդարադատ մարտիկներ» խմբի հոգու խաղաղության համար:

Տրամաբանական մտահանգում՝

Վերոհիշյալից հավանաբար կարելի է եզրակացնել, որ կամ Դաշնակցությունն է ծերացել՝ դատողությունը կորցնելու իմաստով, կամ իր հարցերն արդեն լուծվել են թուրքերի հետ, քանզի հենց էս վերջերս էր, որ ՀՅԴ պաշտոնաթերթ՝ «Ալիք»-ի խմբագիր Դերենիկ Մելիքյանը, բարով, խերով, մեկնեց Թուրքիա, իսկ այսօր բացեիբաց իր թերթում գրում է, որ ՀՅԴ-ն ժամանակին «աշխարհի տարբեր երկրներում Թուրքիայի դիւանագիտական պաշտօնատարների» տեռորի է ենթարկել:

Տեղին է հիշել, որ «Արդարադատ մարտիկներ»-ի գործող տարիներին, ՀՅԴ-ն միշտ էլ հերքում էր իր ուղղակի կապը նրա հետ, իսկ «Արդարադատ մարտիկներ»-ը հայտարարում էին. «Ողջ աշխարհը թող իմանա, որ մեր զենքը միայն այն ժամանակ է գետին դրվելու, երբ Թուրքիան պաշտոնապես ճանաչի 1915թ. Հայոց ցեղասպանությունը և ընդունի որ հայության ներկայացուցիչների հետ արդարության վերականգնման համար բանակցության նստի»:

Ահա «Ալիք»-ի հոդվածը

«120-ամեայ անշեղ ուղին»

«Հ.Յ. Դաշնակցութիւնը՝ Հայ Դատի վերանորոգ պահանջատիրութեան առաջնորդի դերում»

«1965 թւականին Հայոց Մեծ Եղեռնի 50-ամեակով եւ Խորհրդային Միութեան իշխանութիւնների խրուշչովեան շրջանի քաղաքականութեան մեղմացումով՝ ծայր առաւ սփիռքեան միասնութեան եւ Հայ Դատը համազգային

տարողութեամբ հետապնդելու մի նոր ալիք, որն իր գործնական արտայայտութիւնը գտաւ Հ. Յ. Դաշնակցութեան միջոցով նախաձեռնուած պահանջատիրութեան ընդհանուր մթնոլորտի ստեղծումով:

Այսպէս՝ Հայ Դատը եւ Հայոց Ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչել տալու նպատակով՝ սփիւռքահայ քաղաքական միտքը պայքարի առաջին պլան է մղում Թուրքիայի կառավարութեան դատապարտման եւ պատասխանատուութեան կանչելու հարցը՝ արդարացիօրէն գտնելով, որ Ցեղասպանութեան միջազգայնօրէն ընդունումն ու դատապարտումը յանգեցնելու է Հայ Դատի լուծման անհրաժեշտութեանը:

Հայ Դատի լուծման համար մղող պայքարը նախորդ դարի 70-80-ական թւականներին երկու ուղղութեամբ էր ընթանում՝ իրաւական-քարոզչական եւ զինեալ արդար պայքարի նոր դրսեւորումով: Այսպէս՝ դիւանագիտական, քաղաքական միջոցների կիրառման կողքին՝ որպէս Հայ Դատի լուծման համար մղող պայքարի գործնական ձեւ՝ առաջ է քաշւում աշխարհի տարբեր երկրներում Թուրքիայի դիւանագիտական պաշտօնատարների ահաբեկչութիւնը: Նոր պայմաններում ահաբեկչութիւնը դառնում է ազգային-ազատագրական պայքարի այն ձեւը, որ պէտք է Հայ Դատի հարցը հանէր փակուղուց եւ նորից դարձնէր միջազգային յարաբերութիւնների օրակարգի հարց:

Այս իմաստով՝ ՀՅԴ «Հայոց Ցեղասպանութեան արդարադատ մարտիկներ»-ի հանդէս գալը զուգադիպում է արդարութեան ու ինքնահաստատման այն պահանջին, որ ժամանակի ոգին է ծնել:

«Հայոց Ցեղասպանութեան արդարութեան մարտիկներ» կազմակերպութիւնը գործեց մինչեւ 1983 թւականը, որի ընթացքում կազմակերպեց մեծ թւով ահաբեկչական գործողութիւններ՝ Եւրոպայի տարբեր մայրաքաղաքներում եւ ԱՄՆ-ում, որոնց մէջ աչքի է ընկնում յատկապէս 1983 թւականի Լիսբոնի հինգ մարտիկների ինքնահրկիզման սխրալի գործողութիւնը:

Հայ ժողովուրդը մէկ անգամ եւս աշխարհին ապացուցեց, որ ազգային-ազատագրական արդար պայքարի գաղափարն ու գործը ազգի արեան մէջ է. ուստի՝ հայ երիտասարդները, ղեկավարուելով նախնիների արեան կանչով, մահն աչքի տակ առած՝ պայքարի դուրս եկան Հայ Դատի լուծման ճանապարհին հայոց արդար պահանջատիրութեան նորովի վերարծարծմանն ու դրա առջեւ ցցած լռութեան պատնէշների քանդմանը:

«Ալիք», 25 դեկտեմբերի 2010թ. էջ՝ 1:
«Արաքս» շաբաթաթերթ թիվ 203

Թուրքիայում վերջին տարիներին հարյուրավոր ծպտյալ հայեր վերադառնում են իրենց ինքնությանը. Radikal

20.11.2010

«Թուրքիայում շարունակում է աճել իրենց հայկական ինքնությանը վերադարձողների թիվը»,-իր հոդվածում գրում է թուրքական Radikal պարբերականը:

«Բոլորը մեզ քուրդ մուսուլման էին համարում: Հայրս ու մայրս հավատացյալ մարդիկ էին: 12 տարեկան հասակում մեր բակի երեխաներն սկսեցին ինձ «գյավուր» (անհավատ-HayNews.am) անվանել: Մորս հարցրեցի, թե ինչու են ինձ նման բան ասում, և նա պատասխանեց, որ մենք հայ ենք: Դպրոցում ինձ սովորեցնում էին, որ «հայերը մարդ են կոտորել»: Հայ լինելու համար անընդհատ լացում էի: Տարիներով չէի կողմնորոշվում՝ ինչ անել: Եվ ի վերջո որոշեցի իմ նախնյաց կրոնին վերադառնալ: 17 տարի առաջ քրիստոնեություն ընդունեցի և մինչ այժմ քրիստոնյա եմ»,-այսպես է պատմում իր դարձի մասին 37-ամյա հայ ոսկերիչ Յուսուֆ Յըլմազը:

Յըլմազը միակ օրինակ չէ, գրում է թուրքական թերթը և հավելում, որ անանուն մնալ ցանկացող բարձրաստիճան մի պաշտոնյայի փոխանցմամբ՝ վերջին տարիներին Թուրքիայում զգալի ավելացել է դարձի եկող հայերի թիվը:

«Վերջին 4 տարիների ընթացքում Պոլսո պատրիարքություն և այլ հայկական եկեղեցիներ դիմողները հաշվվում են հարյուրավորներով: Վերջիններս վերադառնում են իրենց կրոնին և ինքնությանը: Հատկապես ուշադրություն է գրավում երկրի արևելքում ապրող մարդկանց քրիստոնյա դառնալու դեպքերի մեծ քանակը»,-նշում է նույն աղբյուրը և մի դեպք պատմում, թե ինչպես է Պոլսում բնակվող ազգայնականությամբ հայտնի մի փաստաբան 5 տարի առաջ միամիտ իմացել իր հայ լինելու մասին: Վերջինս բարդ դրության մեջ է հայտնվել, քանի որ հայտնի է եղել իր ազգայնականությամբ: Սակայն նա էլ մի քանի տարի անց փոխել է իր կրոնը , մկրտվել ու դարձել քրիստոնյա հայ:

Գեղիքփաշայի բողոքական եկեղեցու հոգևոր առաջնորդ Գրիգոր Աղաբաօղլուն էլ իր հերթին Radikal-ին հայտնել է, որ Թուրքիայի արևելյան նահանգներում բնակվում են 1 մլն հայեր, ովքեր չեն ուզում կամ վախենում են բացահայտել իրենց ինքնությունը: «Սակայն վերջին տարիներին իշխանությունների վարած քաղաքականության արդյունքում ավելի շատ ծպտյալ հայեր բացահայտում են իրենց ինքնությունը, մկրտվում ու հայկական անուններ վերցնում: Այնուամենայնիվ, Թուրքիայի արևելյան շրջաններում ավելի բարդ է դարձի գալը, այստեղ մեծ են մուսուլմանների ճնշումները դարձի եկած քրիստոնյաների նկատմամբ: Որոշ դեպքերում դարձի եկածները նաև իրենց ընտանիքների,

ազգականների կողմից են հալածանքների ենթարկվում»,- նշում է հայ բողոքական հոգևորականը:

Radikal-ը նաև ներկայացնում է ազգային ինքնության վերականգնման ճանապարհը: Արմատներին վերադառնալ ցանկացողները նախ դիմում եմ պետությանը, որպեսզի պաշտոնական փաստաթղթերում փոխեն իրենց կրոնական պատկանելության դիմաց գրված «մուսուլման» բառը «քրիստոնյա» բառով, ապա դիմում են եկեղեցուն: Եկեղեցին էլ իր հերթին մկրտում է նրանց, և նրանք վերադառնում են իրենց արմատներին:

HayNews.am

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՍՏԱՆ Է ԳՏԵԼ ԴԵՐՍԻՄՈՒՄ

«Դերսիմի հարցը» կարծես դարձյալ լրատվամիջոցների ուշադրությանն է արժանանում: Հոկտեմբերի 26-ի համարում, օրինակ, թուրքական «Եշիլգազեթե» կայքը տեղեկացրել էր, որ նախորդ օրը Միհրան Փրկիչ Գյուլթեքինի եւ նրա զինակիցների նախաձեռնությամբ հիմնադրվել եւ պաշտոնապես Թուրքիայում գործունեության է անցել «Դերսիմի հայերի դավանանքի եւ փոխօգնության» առաջին միությունը, որի գլխավոր առաջադրանքն է Թուրքիայում բնակվող ժողովուրդների մշակութային արժեքների եւ դավանանքի պահպանման համար համապատասխան մթնոլորտի ձեւավորմանը նպաստելը: Իսկ վերջերս «Գեղարդ.կոմ» (keghart.com) կայքը տնօրինող լրագրող Համո Մոսկոֆյանը հարցազրույց է ունեցել Desmala Sure journal պարբերականի խմբագիր եւ «Դերսիմի ազատության կուսակցության» հիմնադիր Սեյֆի Չենգիզի հետ: Ստորեւ թարգմանաբար այդ հարցազրույցը՝ վերոնշյալ վերնագրով:

Հ. Մ. - Խնդրում եմ ներկայանաք եւ նշեք Ձեր դերը Դերսիմի շարժման գործընթացում:

Ս. Չ. - Desmala Sure պարբերականի հրատարակումով 1991 թվին սկսվեց Դերսիմի շարժման նոր փուլը, չնայած դրանից առաջ Դերսիմի ինքնության որոշակի գաղափարը եղել էր իմ ուշադրության կենտրոնում: Պարբերականի հրատարակումով առաջին անգամ քննարկման առարկա դարձավ Դերսիմի հարցը, որն էլ իր հերթին իրազեկման նոր խթան էր դերսիմցիների շրջանում ինչպես Դերսիմում, այնպես էլ դրանից դուրս: 1997-ին պարբերականի համախոհները մտահղացան ստեղծել քաղաքական մի կուսակցություն «Պարտիա Սերբեստիյա Դերսիմ» (ՊՍԴ) անունով, որը նշանակում է «Դերսիմի ազատության կուսակցություն»: Ես հիմնադիր-խմբագիրն եմ վերոնշյալ պարբերականի եւ կուսակցության ստեղծման նախաձեռնողներից մեկը:

- Որո՞նք են Ձեր կազմակերպության նպատակները եւ ապագայի ծրագրերը:

- ՊՍԴ-ն հետամուտ է լինում Անատոլիայում ժողովրդավարություն եւ Դերսիմում ժողովրդավարական ինքնակառավարում հաստատելուն: Այս «ինքնակառավարում» եզրը չպետք է հասկանալ անպայման ինքնուրույն պետություն իմաստով: Կուսակցությունը նախապատվությունը տալիս է Դերսիմի ինքնավարությանը, այսինքն՝ այն կարգավիճակին, որ ունեցել է նախքան 1938 թիվը: Հավատացած ենք, որ դրանով Դերսիմի հարցը կստանա իր արդարացի լուծումը: Մենք հարգում ենք տարբերությունները Դերսիմում: Պետք է նշել, որ էթնիկական, կրոնական եւ լեզվական այդ տարբերությունները երբեք էլ հակամարտության առիթ չեն եղել, այսինքն՝ գոնե մինչեւ այն ժամանակ, երբ Դերսիմը դարձավ վիճելի տարածք շրջակա մահմեդական համայնքների թուրք, քուրդ եւ վերջերս նաեւ զազա ազգայնականների միջեւ, որոնք բազմազանությունը որպես խնդիր են դիտարկում եւ ձգտում են միատարրության: Մենք կողմ ենք ժողովրդավարական ինքնիշխանության եւ բազմատարր հասարակության հաստատմանը Դերսիմում եւ կարծում ենք՝ դա լավ օրինակ կդառնա որպես հակակշիռ այն ծրագրերի, որոնք տարածքը ցանկանում են բաժանել էթնիկական կամ լեզվական մասերի: Եվրոպայում մենք ցանկանում ենք մեր ջանքերը կենտրոնացնել «Դերսիմ-38-ի նախաձեռնության» վրա, որի նպատակն է միջազգային հանրության ուշադրությունը բեւեռել Դերսիմի ցեղասպանության վրա եւ ըստ այդմ թուրքական պետությանը պատասխանատվության կանչել միջազգային դատարանում:

- Ո՞րն է Ձեր քաղաքական եւ մարդասիրական դիրքորոշումը զազաների, կզըլբաշցիների, հայերի եւ այլ փոքրամասնությունների հանդեպ քեմալական Թուրքիայի իրականացրած 1937 թվի Դերսիմի ցեղասպանության հարցում:

- 2005 թվի մարտին սկզբնավորված «Դերսիմ-38-ի նախաձեռնությունը» մեր ՊՍԴ կուսակցության ծրագրերից է, որն արդեն շատ մարդկանց է (Դերսիմում եւ դրա սահմաններից դուրս) իրազեկել 1937-38 թվերին կատարված ցեղասպանության մասին: Մարդկանց մտայնությունը փոխվել է: Մեր դիրքորոշումը շատ հստակ է: Մենք արդեն Բեռլինում ունենք լոբբիստական մի կենտրոն («Դերսիմ ցենտրում-38»), որը 2007-ին է բացվել, եւ հիմա աշխատում ենք նոր կենտրոններ բացել եվրոպական այլ մայրաքաղաքներում: Մի փոքր պարզաբանում այստեղ տեղին կլինի: 1937-38 թվերին տեղի ունեցավ կզըլբաշցիների ցեղասպանությունը: Կզըլբաշցիները նույն դերսիմցիներն են, որոնց կոտորեցին միայն այն պատճառով, որ մահմեդական չէին: Իսկ զազաները մեր մահմեդական հարեւաններն են: Նրանց կոտորեցին 1925-ին:

Ընկերներս եւ ես առաջիններից էինք, որ 1980-ականներից սկսած ճանաչում ենք զազա փոքրամասնության առկայությունը եւ պաշտպանում ինչպես նրանց էթնիկական ինքնությունը այստեղ, այնպես էլ նրանց ինքնիշխանության իրավունքն այն վայրերում, որտեղ մեծամասնություն են կազմում: Միաժամանակ քանիցս նշել ենք, որ դերսիմցիներն ու զազաները երկու իրարից տարբեր համայնքներ են, չնայած իրենց էթնիկական արմատներով իրար շատ մոտիկ են եւ խոսում են միեւնույն «դիմիլքի» կոչված լեզվով: Կան, անշուշտ, կրթյալ դասակարգի մեջ մարդիկ, որոնք դերսիմցիներին ստորադաս են համարում, բայց ժողովրդի մեծամասնությունը չի ընդունում նման տարբերակումը: Դերսիմի ինքնությունը չի սահմանվում ցեղի, արյան կամ լեզվի օգտագործման տվյալներով, այլ պատմական, աշխարհագրական եւ մշակութային հանգամանքներով: Դերսիմը կարիք չունի կառչելու թուրքական, քրդական կամ զազայական ինքնությունից: Նա ունի իր ուրույն ինքնությունը, որի արմատները կարելի է գտնել 1514 թվի Չալդրանի պատերազմի ժամանակներում իրագործված

կզըլբաշցիների ցեղասպանության հիմքում: 1937-38 թվերին կատարվածը այդ շղթայի մի օղակն է սոսկ: Կարճ ասած, Դերսիմի հարցը հինգհարյուրամյա պատմություն ունի:

Պետականություն կազմելու մարտավարության թուրքական մոդելը հիմնված էր փոքրամասնություններին (հայ, հույն, ասորի, զազա, քուրդ, դերսիմցի) կոտորելու եւ նրանց բնաջնջելու վրա: Սրանք ապացուցված փաստեր են, եւ անհրաժեշտ է ճնշում բանեցնել թուրքերի վրա, որ նրանք ընդունեն այս բոլորը: Ներկայումս շատ քիչ թվով հույներ եւ ասորիներ կան Թուրքիայում: Այդ քչերին սպառնացող վտանգը վերացնելու կամ մեղմելու համար անշահախնդիր համագործակցություն է պետք: Մենք կողմնակից ենք, որ Թուրքիան ճանաչի 1915-ին հայերին պատուհասած ցեղասպանությունը եւ բացի Հայաստանի հետ ունեցած իր սահմանը: Թուրքիայում ապրող բոլոր հայերը պետք է վայելեն միեւնույն, թուրքերին հավասար, քաղաքացիական իրավունքները, եւ բոլոր նրանք, ովքեր ցանկանում են վերադառնալ իրենց պապենական երկիրը, պետք է կարողանան գալ եւ ստանալ (անվտանգության) համապատասխան երաշխավորություն:

- Ձեր երկարամյա փորձառությունից ելնելով՝ ի՞նչ կցանկանայիք հաղորդել մեր ընթերցողներին:

- Դերսիմը պարպվում է իր բնակչությունից: Դրա համար շրջանառվում են 2 հիմնական պատճառներ. մեկը Մունչուր գետի վրա ջրամբարի շինարարության ծրագիրն է, մյուսը՝ այսպես կոչված «պայքարը ընդդեմ ահաբեկչության»: Երկուսն էլ կեղծ պատճառաբանություններ, պատրվակներ են իր լրումին հասցնելու համար 1937-38 թվերի գործընթացը: Դրա համար էլ անհրաժեշտ է շտապ համախմբվել: Դա պետք է արվի ոչ թե սոսկ դերսիմցիներին փրկելու համար կամ հանուն նրանց, այլ հանուն մարդկության պատմության, քանի որ պատմությունը միշտ էլ ապաստան է գտել Դերսիմում: Դարեր շարունակ տարբեր ազգությունների (այդ թվում՝ հայ) մտավորականներ, փիլիսոփաներ եւ կրոնավորներ, որոնք հետապնդվել են իշխանությունների կողմից, ապաստան են գտել Դերսիմում, այնպես որ ոչ միայն դերսիմցիներն ու հայերը, այլեւ ամբողջ մարդկությունն է շահելու այս հողատարածքի վերակենդանացմամբ:

Դերսիմի հայերն իրենց միությունն ունեն. նպատակն է մկրտել 600 անդամներին

20.11.2010

Թուրքիայի Դերսիմ նահանգում ծնված (ներկայիս Թունջելի) հայերը հիմնել են իրենց միությունը: «Դերսիմի հայերի միությունը» հիմնելու աշխատանքներն սկսվել էին դեռ 8 ամիս առաջ, սակայն միայն վերջերս են բոլոր թղթաբանական քաշքշուկներն ավարտվել, և միությունն արդեն կարող է ամբողջ ծավալով գործել: Միության առաջնային նպատակներից է մկրտել իր 600 անդամներին, ինչպես նաև կազմակերպել հայերեն դասընթացներ: Դերսիմցի հայերն այսքանով չեն վերջացնում իրենց առաքելությունը. նրանք պատրաստվում են որոշել հայերին պատկանող վանքերը, գերեզմանատները,

տարբեր շինությունները և հիմնադրամների օգնությամբ վերանորոգել ու պահպանել դրանք, հայտնում է Sabah-ը: Հետաքրքիր է նաև «Դերսիմի հայերի միության» հիմնողի պատմությունը, ով 8 ամիս առաջ փոխեց մուսուլմանական կրոնը, թրքական Սելահեդդին Գյուլթեքին անունը, և մկրտվելով՝ ստացավ Միրան Փրկիչ անվանումը: Միրանի հետ միության ստեղծման գործին լծվեցին նաև նրա 7 ընկերները, և նրանց հաջողվեց իրականություն դարձնել իրենց մտադրությունը:

HayNews.am

Մշակույթ

ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐԿՆԱՔԱՐԱՅԻՆ ԽԱՌՆԱՐԱՆ ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ՎՐԱ

Երկու գիտնականների հայտնագործությունը

Աստղաֆիզիկոսներ Վահագն Գուրզադյանի եւ Սվեր Աարսեթի կողմից Արարատ լեռան վրա երկնաքարային հնարավոր բնույթի խառնարանի հայտնագործման վերաբերյալ նրանց հոդվածը ներկայումս տպագրության մեջ է բրիտանական OBSERVATORY գիտական ամսագրում: Սակայն մինչ այդ, հայտնվելով Քորնելի համալսարանի կայքում, այդ լուրը անցել է աշխարհի տարբեր լրատվամիջոցներ: Ստորեւ թարգմանաբար բերում ենք թուրքական լրատվամիջոցներից (IGDIR, Softpedia) տեղեկատվությունը՝ հիմնված Մասաչուսեթսի Տեխնոլոգիական ինստիտուտի տեղեկագրի հաղորդագրության վրա:

Մասնագետների թիմը կարծում է, որ նրանք հայտնաբերել են հավանաբար երկնաքարային բնույթի խառնարան բիբլիական Արարատ լեռան վրա՝ պատմական Հայաստանում: Խառնարանը կարող է առաջացած լինել միլիոնավոր տարիներ առաջ:

Հայտնագործությունը կատարել են երկու ֆիզիկոս, որոնք ինչ-որ կերպ ստացել են թույլտվություն՝ մտնելու լեռան այն տարածքը, որը փակ է հասարակության համար. լեռան հյուսիսային եւ արեւմտյան լանջերը փակված են իշխանությունների կողմից:

Արարատ լեռը գտնվում է Արեւելյան Թուրքիայի գրավյալ հայկական տարածքում (ուշադրություն դարձնել թուրքական լրատվամիջոցի այս բնորոշմանը - խմբ.), Հայաստանի եւ Իրանի հետ փաստացի սահմանի մոտակայքում: Տարածաշրջանում

քաղաքական իրավիճակը անկայուն է, այդ պատճառով էլ թուրքական իշխանությունները լեռան հյուսիսային եւ արեւմտյան մասերի մատչելիության սահմանափակումներ են դրել: Բայց բնաշխարհի գեղեցկությունը շատերին է հրապուրում, մանավանդ որ, ըստ Աստվածաշնչի, ջրհեղեղից հետո Նոյյան տապանը այնտեղ է հանգրվանել: Թեեւ մինչեւ օրս ոչ մի հետք չի հայտնաբերվել:

Չնայած այդ սահմանափակումներին, գիտնականներ Վահագն Գուրզադյանին՝ Երեւանի ֆիզիկայի ինստիտուտից եւ Սվեր Ասարսեթին՝ Մեծ Բրիտանիայի Քեմբրիջի համալսարանից, հաջողվել է հետազոտել տարածքը: Նրանք հայտնաբերել են մի խառնարան, որը կարիք ունի հետագա հետազոտման, որ իրոք երկնաքարային բնույթի է: Խառնարանը գտնվում է 2.100 մետր բարձրության վրա, 390 47՛30՛՛՛ հյուսիսային եւ 440 14՛40՛՛՛ արեւելք կոորդինատներով: Ըստ նկարագրության, խառնարանը ունի մոտ 70 մետր տրամագիծ, մոտ 15 մետր խորություն: Գիտնականները գտնում են, որ խառնարանը կարող է ունենալ տիեզերական երկնաքարային հարվածի բնույթ, սակայն դրա հրաբխային բնույթը նույնպես չի բացառվում: Նրանք բացառում են խառնարանի սառցադաշտային բնույթը: Գիտնականները նշում են հետագա հետազոտությունների անհրաժեշտությունը՝ խառնարանի բնույթը եւ տարիքը պարզելու համար:

Նման հետազոտությունները, կարծում են մասնագետները, չափազանց կարեւոր են, քանի որ հնարավորություն են տալիս պարզելու երկնաքարերի հարվածների ազդեցությունը երկրագնդի անցյալի վրա:

Massachusetts Technology Review-ն նշում է, որ խառնարանը այդ գիտնականների միակ հայտնագործությունը չէ: Քանի որ տարածքը փակ է, փաստորեն հետազոտված չէ, Գուրզադյանին եւ Ասարսեթին հաջողվել էր նկարահանել ավերակներ, որ ինչպես հետո պարզվել է, պատկանում են V-VI դդ. հայկական բազիլիկ եկեղեցու՝ մինչ այդ մասնագետներին անհայտ (այդ հետազոտության մասին հոդվածը Վ. Գուրզադյանը հրատարակել է համատեղ ակադ. Վարազդատ Հարությունյանի հետ. Պատմա-բանասիրական հանդես, 2, 2006 - խմբ.):

Գինեգործության հնագույն վայրը հայտնաբերվել է Հայաստանում. այն ունի 6000 տարվա պատմություն

11.01.2011

Գինու պատրաստման հնագույն վայրը Հայաստանն է: Այդ մասին գրում է The Associated Press գործակալությունը՝ նշելով, որ այն հայտնաբերվել է Հայաստանի լեռներում՝ Արենի գյուղի շրջանում գտնվող մի քարայրում , որն ունի ավելի քան 6000 տարվա պատմություն: Տարբեր երկրների հեղինակավոր հնագետներից բաղկացած խմբի հետազոտությունների արդյունքում քարայրում հայտնաբերվել է բաժակ, ափսե, խաղողի ողկույզի հետքեր, որոնք շուրջ 6000 տարվա պատմություն ունեն: Հետազոտական խմբի ղեկավարներից Գրիգոր Արեշյանը, ով Կալիֆորնիայի համալսարանն է ներկայացնում, նշել է, որ պեղումների արդյունքում ձեռքբերած փաստերն ապացուցում են՝ մարդկությանը հայտնի գինու արտադրության ամենահին վայրը Հայաստանն է: Այս տեղեկատվությունն անցած երեքշաբթի հրատարակվել է National Geographic հեղինակավոր պարբերականում: «Ձեռքբերած ապացույցները բավական են պնդելու, որ գինեգործության ամենահին օրրանը հենց Հայաստանն է»,-նկատել է հնագիտական արշավախմբի մեկ այլ ներկայացուցիչ՝ Փենսիլվանիայի հնագիտական թանգարանի տնօրեն Պատրիկ ՄաքԳովերնը: Նկատենք, որ մինչ այդ գինեգործության մեկ այլ վայր էր հայտնաբերվել էր Եգիպտոսում, սակայն այն ուներ 5100 տարվա պատմություն: **HayNews.am**

ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ ՀԻՆ ՏՈՄԱՐՈՎ ՆՈՐ ՏԱՐԻՆ Է

Ինչպես է առաջացել նոր տոմարը: Հաճախ այս հարցի շուրջը բանավիճում են: **«Ազգը»** փորձեց Արարատյան հայրապետական թեմի մամլո դիվանից ճշտել, թե երբ ենք նշելու հին տոմարով Նոր տարին եւ ինչպես է առաջացել նոր տոմարը:

Հին տոմարով նոր տարին նշվում է հունվարի 14-ին, որը համարժեք է հունվարի 1-ին: Հին եւ նոր տոմարների միջեւ տարբերությունը 13 օր է: Հունվարի 13-ը համարժեք է դեկտեմբերի 31-ին:

Նոր՝ Գրիգորյան տոմարը, հաստատվել է 1582 թ. հոկտեմբերին:

Հռոմի Գրիգոր 13-րդ պապը նկատեց, որ Հուլյան (հին) տոմարը մինչեւ 16-րդ դարը տվել է 10 օրվա տարբերություն: Այդ տարբերությունը հայտնի եղավ գարնանային գիշերահավասարից՝ մարտի 21-ից, որովհետեւ գարնանային գիշերահավասարը փոխանակ 325 թ., Նիկիայի ժողովի որոշման համաձայն մարտի 21-ին հանդիպելու, հանդիպել էր մարտի 11-ին՝ այսինքն 10 օր առաջ: Այդ պատճառով Գրիգոր 13-րդ պապը ժամանակի հայտնի աստղագետների եւ մաթեմատիկոսների առաջարկությամբ հաստատեց նոր տոմարը:

Գրիգոր 13-րդը կարգադրեց 1582 թ. հոկտեմբերի 4-ին (հինգշաբթի) հաջորդող համարել ուրբաթ՝ հոկտմբերի 15-ը՝ բաց թողնելով կուտակված 10 օրերը, որոնց սխալն առաջացել էր 325-1582 թթ. ընթացքում: Այսպիսով 1583թ-ից սկսած գիշերահավասարի սխալն ուղղվեց:

16-20-րդ դարերի ընթացքում հուլյան (հին) եւ գրիգորյան (նոր) տոմարների միջեւ տարբերությունը կազմեց 13 օր: 21-րդ դարի կեսերին հուլյան (հին) եւ գրիգորյան (նոր) տոմարների միջեւ տարբերությունն արդեն կկազմի 14 օր:

Իրանահայ վաստակավոր ուսուցիչ եւ թարգմանիչ Լեոնթին Մասումյան

Տկն. Լեոնթին Մասումյանը ծնվել է 1923 թվականին՝ Թեհրանում, զավակն է ղարաբաղցի Լեւոն Մասումյանի եւ իրանահայ Նվարդ Մասումյանի: տարրական կրթությունը ստացել է, հայկազյան, իսկ միջնակարգը Նուրբախշ դպրոցներում: ապա ընդունվել է Թեհրանի Պետական համալսարանի լեզվաբանական ճյուղը: դեռ ուսանողական շրջանից սկսել է դասավանդել պարսկերեն լեզու՝ Քուշեշ դպրոցում: 1954 թվականին կրթական նախարարության կողմից կրթաթոշակի (բուրս) հնարավորություն ստանալով՝ մեկնել է ԱՄՆ, որտեղ Միչիգանի համալսարանում մասնակցել է՝ անգլերեն լեզվի, գրականության, մանկավարժության եւ հոգեբանության դասընթացներին, իսկ 1965 թվականին, կրկին կրթաթոշակից օգտվելով՝ ուսանել է Լոնդոնի եւ Շոտլանդիայի էդինբուրգ քաղաքների համալսարաններում: Տարիներ պաշտոնավարել է որպես անգլերեն լեզվի ուսուցիչ՝ հայոց Սանդուխտ, Թովմասյան, նաեւ պարսկական տարբեր դպրոցներում: Ուսանողական տարիներից սկսել է թարգմանություն կատարել անգլերեն գրականությունից, որոնք լույս են տեսել Ալիք օրաթերթում, Լույս եւ Լուսաբեր ամսագրերում, ինչպես նաեւ՝ սփյուռքահայ մամուլում: Նրա թարգմանությամբ լույս է տեսել Արմենիա Սագինյան-Կարապետյանի պատմվածքների ժողովածուն՝ «Նրանք երբեք չեն վերադառնում» խորագրով:

Նա անգլերենից հայերեն թարգմանություններ է կատարել՝ Վորքընգի, Վ. Լիվինգստոն Լարնեդի, Ռեյ Բրադբրիի, Վիլիամ Սարոյանի, Օ. Հենրիի գրչին պատկանող գրվածքներից: Մասնակից է եղել Իրանահայ գրողների միության միջոցով հրատարակված պարսկերեն լեզվով «Վերապրողները վկայում են» գրքի նյութերի հայերենից պարսկերեն թարգամանությանը եւ «Հայուհին ու իր տարազները» գրքի նյութի պատրաստման աշխատանքին: նրա աշխատություններից է նաեւ «Թեւավոր խոսքեր եւ որոշ գիտելիքներ» հայերեն լեզվով գրքի հավաքագրման աշխատանքը, որը հրատարակվել է Հայ Կին միության միջոցով: Նա Իրանահայ գրողների միության հիմնադիրներից եւ Հայ Կին միության անդամուհի է: 2006 թվականին Հա Կին միության նախաձեռնությամբ տեղի է ունեցել տկն. Լեոնթին Մասումյանի եւ իրանահայ բանաստեղծուհի տկն. Էլսո Գարյանի պատվին մեծարանքի երեկո, որտեղ գնահատվել են երկու մշակութային գործիչները: տկն. Լեոնթին Մասումյանը հանգստի կոչվելուց հետո՝ զբաղվել է թարգմանչությամբ եւ ճամբորդություններ կատարելով:

Նա այցելել է Ռուսաստան, Չինաստան, Լիբանան, Թուրքիա, Հավայի, Մեքսիկա, Հնդկաստան, Հայաստան, Ղարաբաղ եւ այլն եւ ունի իր այցելած երկրների ժողովուրդների տարազը ներկայացնող տիկնիկների հավաքածո: Տկն. Մասումյանը, դժբախտաբար, երկու տարի է, որ կոտրվածք է ստացել եւ բնակարանում ապաքինման շրջանն է անցկացնում, որին ցանկանում ենք շուտափույթ առողջություն եւ ուժերի վերագտնում:

Ստորեւ ներկայացնում ենք Լրագրողների համահայկական 5-րդ համաժողովին՝ «Լույս»-ի խմբագրի կողմից ներկայացված երկու նյութերից երկրորդի առաջին մասը

ԻՐԱՆԱՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՄԱՄՈՒԼ

Էդիկ Բաղդասարյան
Լույս ամսագրի եւ
Ապագա հանդեսի խմբագիր

1636-ին, Խատաչուր Կեսարացու եւ մի խումբ հայ գործիչների ջանքերով, հիմնվել է Նոր Ջուղայի հայկական տպագրությունը, որն առաջինն էր Իրանում եւ ամբողջ Միջին Արեւելքում: Իր գոյության առաջին հինգ տարում (1638-42) հրատարակել է «Սաղմոս ի Դավիթ»-ը «Հարաց վարք»-ը «Պատարագատետր (Խոնրհրդատետր)-ը եւ «Ատենի ժամագիրք»-ը, ապա՝ «Գիրք տոմարաց...»-ը (1647): 1637-38-ին լույս է ընծայել երեք դավանաբանական գիրք: Մոտ երկու հարյունարմյա դադարից հետո՝ 1872-ից, տպարանը գործում է մշտապես: Տպագրել է շուրջ 380 անուն գիրք եւ գրքույկ, որոնցից հատուկ արժեք են ներկայացնում՝ Հ.Տեր Հովհաննիսյանի «Պատմություն Նոր Ջուղայի...» (հ.1-2, 1880-1881), Ա.Աթայանի «Սալմաստ» (1906), Լ.Մինասյանի «Սպահանի Փերիա գավառը» (1971): « Փերիաի Աշուղները » (1964): Վերջին տարիներին հրատարակություններից կարեւոր են Է.Մանճիկյանի «Հովհաննես կաթողիկոս Օփեցի» (1967), Հ.Ալահվերդյանի «Դեւ (Մարգար Ղարաբեգյան) եւ իր պոեզիան» (1972) եւ այլ աշխատություններ նույն տպարանում է տպագրվել նաեւ «Նոր Ջուղայի լրաբեր»-ը:1979 թվականից հետո տպագրվել են հարյուրավոր գրքեր հայերենով եւ պարսկերենով հայոց պատմության եւ մշակույթի մասին:

Իրանահայ տպագրության երկրորդ կենտրոնը եղել է Թավրիզը: Տեղի Արամյան դպրոցում 1888-ին, Ատրպատականի հայոց առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Մխիթարյանի ջանքերով եւ Մոսկվայաբնակ Հովհաննես Հովնանյանցի բաերարությամբ, հիմնվել է տպարան, որտեղ լույս են տեսել գրքեր, դասագրքեր, օրացույցներ, պարբերականներ: «Թեհրանահայ ուսումնասիրաց ընկերություն» հիմնադիրներ՝ Մ.Մարգարյանի, Հ.Գասպարյանի եւ Կ.Բազիրկանյանի ջանքերով ճավայի հայություն օժանդակությամբ 1890 թ. Թեհրանում հիմնադրվում է «Ճավահայ տպարան» որտեղ տպագրվել է իրանահայ առաջին պարբերականը՝ «Շավիղ» շաբաթաթերթը: Հետագայում Թեհրանում հիմնադրվել են «Նուրբախշ» (Մասիս 1955), «Վերածնունդ (Բոբոխ 1933-1953), «Փարոս» (1901-1963), «Մոդերն», «Նայիրի» (1959), «Ալիք» (1950), «Ֆարաբի» (1975), «Արաքս» (1955), «Անի» (1956-1980), եւ այլ տպարաններ: Նրանցից այսօր աշխատում են միայն «Ալիք» եւ «Ֆարաբի» տպարանները:

Իրանում տպագրված գրականություն հայ շակույթի մասին (պարսկերեն)

No	Նյութ	1636 - 1979	1979-2008	Գումար
1	Կենսագրություն(էջ)	2,886	1,183	4,069
		٪71	٪29	٪100
2	Բառարանագրություն(էջ)	2634	5775	8409
		٪31	٪69	٪100
3	Պատմագիտություն, մշակույթ(էջ)	3,330	9,540	12,870
		٪26	٪74	٪100
4	Գրականություն(էջ)	4836	5368	10204
		٪47	٪53	٪100
5	Ընդհանուր(էջ)	13,686	21,866	35,552
		٪38/5	٪61/5	٪100

1	Տարիներ	–1636=343 1979	2008–1979=29	2008–1636=372
2	Տարեկան միջին(էջ)	40	754	96
3	Տարեկան միջին տոկոս	40/794=	754/794=	40+754=794
		٪5	٪95	٪100
4	Տարեկան միջին մշակույթի եւ պատմության մասին(էջ)	3330/343=10 Տարեկան էջ	9540/29=328 Տարեկան էջ	328+10=338 Տարեկան էջ
		٪3	٪97	٪100

Շար. 1

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան

Ա. Սուվորովը գոհունակությամբ է ընդունում այդ զեկուցագիրը և ներկայացնում Եկատերինա կայսրուհուն: Ժամանելով Աստրախան Ա. Սուվորովը կապ է հաստատում Ղարաբաղի մելիքների հետ, տեղեկություններ ստանում Անդրկովկասի և մերձակա երկրների մասին: Սուվորովի պաշտոնական ծրագիրն էր շարժվել Դերբենտի և Բաքվի վրայով՝ նպատակ ունենալով Ռուսաստանի հսկողության տակ դնել Գիլիան-Կասպիական ավազանը: Սակայն հաջողության դեպքում չէր բացառվում ավելի լայն գործողություններ ծավալել: Այն հանգամանքը, որ Ա. Սուվորովն ուներ դեպի Ղարաբաղ և Երևան տանող ուղիների մանրամասն նկարագրությունները, վկայում է նրա հետագա հնարավոր գործողությունների մասին: Սակայն ռուսական արշավանքը, որի հետ հայերն այս անգամ նույնպես մեծ հույսեր էին կապում, ձգձգվում էր, մինչդեռ հայության վիճակը գնալով ծանրանում էր:

Ղարաբաղում Փանահ խանի հաջորդ Իբրահիմ խանի օրոք մելիքների դրությունն ավելի էր վատացել: նրանց մի մասը ստիպված էր համայնքներով հեռանալ Ղարաբաղից և ապաստան գտնել Գյանջայի խանությունում, Շամխորում, Լոռիում, Վրաստանի շրջաններում: Հայ մելիքները աղերսագին նամակներ էին հղում Եկատերինա II-ին և շտապ օգնություն խնդրում: Սուվորովը 1781 թ. դեկտեմբերին ուղարկվեց Կազան: Դեպի Կովկաս ռուսական արշավանքի նախապատրաստումը, որ առժամանակ կանգ էր առել, 1782 թ. աշնանը, երբ Պարսկաստանում ներքին խառը վիճակ էր տիրում, աշխուժացավ: Նախատեսվում էր այն իրագործել 1783 թ, գարնանը և Ղարաբաղը՝ որպես անկախ հայկական մարզ, ենթարկել Ռուսաստանին: Ղարաբաղում, Երևանում և այլ հայկական շրջաններում նորից սպասողական վիճակ էր տիրում:

Այդ ժամանակ էջմիածնում կայացած խորհրդակցությունը հորդորում էր առավել հավատարիմ լինել Ռուսաստանին և խնդրել նրա հովանավորությունը: Ազատագրական շարժումների ակտիվ գործիչներից Ստեփան Տեր-Սահակյանը, մեծ ջանք էր գործադրում Երևանի և Ղարաբաղի ազատագրական գործողությունները համընդհանուր ընթացքի մեջ դնելու համար: Նա, 1784 թ. ամռանը, որպես, Արարատյան դեսպան ժամանեց Պետերբուրգ, և սաանալով Հովսեփ Արղությանի կազմած հայ-ռուսական պայմանագրի նախագիծը, ջանում էր այն իրագործել: Այդ ծրագրով պետք է ստեղծվեր Ռուսաստանին ենթակա հայոց թագավորություն: Հովսեփ Արղությանի կազմած հայ–ռուսական պայմանագրի նախագծում հայկական պետականությունը ներկայացվում էր միապետական կարգերի ձևով: Ռուսական հրամանատարությունը և հատկապես իշխան Պոտյոմկինը՝ չէին զլանում առատ խոստումներ տալ հայերին, նույնիսկ հավատացնում էին, թե ռուսական արշավանքների նպատակն է Հայաստանի պետականության վերականգնումը: Սակայն նախատեսվող արշավանքը նորից հետաձգվեց. Ռուսաստանը հույս էր տածում խաղաղ ճանապարհով տիրել Մերձկասպյան շրջաններին:

1783 թ. հուլիսի 24-ին Վրաստանը Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու վերաբերյալ Գեորգևսկում կնքված պայմանագիրը և ռուսական զորամասի ժամանումը Վրաստան նոր աշխուժություն առաջացրին հայկական շրջաններում: Բայց թուրքերը, ստանալով Ֆրանսիայի հովանավորությունը, սանձազերծեցին լեռնականների և տեղական խաների ավերիչ արշավանքները: Թուրքերի նպատակն էր ստիպել Հերակլ թագավորին և մյուսներին՝ հրաժարվել ռուսական հովանավորությունից: 1787 թ. ռուսական փոքրաթիվ զորքերն, իրոք, ստիպված եղան թողնել Վրաստանը:

1787 —1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Անդրկովկասը դուրս մնաց ռազմական գործողությունների թատերաբեմից: Հետևապես Հայաստանը ազատագրելու և հայկական պետականություն ստեղծելու հարցը ևս օրակարգից հանվեց:

Շուտով Անդրկովկասի ժողովուրդների վրա նոր վտանգ կախվեց: 1795—1797 թթ. պարսկական տիրակալ Աղա-Մահմեդ խանի արշավանքները նոր չարիք բերեցին Անդրկովկասի ժողովուրդներին: Գեներալ Զուբովի գլխավորած ռուսական բանակի արշավանքը Անդրկովկաս որևէ արդյունքի չհանգեցրեց, քանի որ Եկատերինա II կայսրուհու մահից հետո նոր գահակալ Պավել 1-ը այն կասեցրեց:

Անդրկովկասի ժողովուրդները շարունակում էին իրենց ազատագրության հույսերը նորից ու նորից դնել Ռուսաստանի վրա:

Շար. 5

Խոհեր

Մեր անցած ճամբան

Թ. Ղարախանյան Միրակցի

Մասչեդ Սուլեյման...

Զինվորության հայտարարված նշված օրվա երեկնա-պահի ժամի 3-ին, տխրության եւ ուրախության մեջ մորաքրոջս «բարի տա Աստված» ասելով, աղոթքների ու օրհնանքների շունչը հետս, ինձ ներկայացրի Ահվազ քաղաքի զինվորական **ՈՒՍՄԱՆ ՁՈՐՔԻ** բաժնին: Զինվորական շենքի առջեւում ասեղ գցելու տեղ չկար, հարյուրավոր մարդ, ծեր ու ջահել, ծնողներ եւ բարեկամներ եկել էին եւ բոլորը չափազանց հուզված էին: Աղոթքի ու աղաչանքների ձայներ էր բարձրացել երկինք, Աստծուց մինչեվ մարգարեներ ու սրբեր: Այսքան աղոթքներից մեզ էլ բաժին հասավ երբ մի տիկնոջ ձայն բոլոր Մասչեդ-Սուլեյման քաղաքից եկած զինվորա-կանների ծնողների անունից աղոթեց, հուզիչ էր մերոնց պատկերը: Այդ տիկնոջ օրինակին օտար ձայներ միացան եւ մյուս փոքր ու մեծ քաղաքների ծնողների անունից իրենց աղոթքի ձայնը բարձրացրին: Մի պահ թվաց թե կարծես մեծաթիվ ուխտավորների միջից պիտի անցնեի եւ ինձ ներկայացնեի: Վերջապես աստիճանները բարձրացա եւ մի շարք զինվորական հսկիչներին ներկայացման թուղթերը ցույց տալով միացա 320 հոգի ինձ նմաններին որ ներկա էին գտնվել վիճակահանությամբ մեր զինվորական ճակատագիրը պերզելու՝ կամ վիճակահանությամբ ազատվելու էինք կամ գնալու էինք զինծառայության:

Հավանաբար ժամեր անցավ մինչեւ սպանների վազվզոցը վերածվեց հանդարտ քայլերի եւ մեզ 8 շարքի կանգնեցրին, ամեն մի շարք 40 հոգի եւ ամեն շարքի մոտ մի հսկող զինված սպա հատ ու կենդ հրամաններով շարքերը հսկում եւ պատրաստում էին վիճակահանության համար:

Եւ այսպես 8 շարքերը պարսկական այբուբենի հերթականությամբ նշանակվեցին եւ վերջապես ճակատագրական պահը հասավ երբ ձեռքի բարձրախոսով, տարբեր անուններ կանչելով, չորս շարք դուրս մանացին եւ մյուս 4 շարքը նշանակվեցին ԶԻՆՎՈՐ եւ այսպիսով սրտի տրոփյունները կանգ առան:

Եւ այդպիսով մեր շարքը կանչվեց զին ծառայության: Ակամա տանկերի հետեւից վազող զինվորի պատկերներ էինք երեւակայում մեր մտքերում. մի քանի փսփսոցներ էլ լսվում էր՝«ավա՜ղ, ավա՜ղ»: որը արգելվեց սպայի կողմից:

Բոլորիս մի ցուցակ տալով, հայտարարեցին որ՝

- Նրանք որ ի վիճակի են, միայն ցուցակի մեջ գրված պիտույքները վերցնեն եւ մինչեւ ժամը 23-ին վերադառնան զինվորանոց:
- Ովքեր ձեռնահասություն չունեին ցուցակի միջի անձնական իրերը պատրաստելու կամ այս քաղաքում որեւէ հարազատ չունեին, պիտի հայտնեին, որպեսզի զինվորանոցում իրենց անձնական իրեր տրվեին:

Փոքրաթիվ մի քանի ձեռք բարձրացան, որոնք մի շարք կազմեցին եւ մնացածիս իրավունք տրվեց քաղաքում, մեր հարազատներին հրաժեշտ տալու եւ նույն գիշերը ժամի 23-ին ներկայանալու զինվորանոց: Եւ հայտարարեցին որ այս զինվորանոցից ավտոբուսով պիտի ուղարկվեինք օտար քաղաք: Մեր ընտրված չորս շարքերը առաջին շրջանի **ՈՒՍՄԱՆ ՁՈՐՔ**-Ի զինվորներն էինք լինելու եւ խտացած 6 ամսյա զինավարժության էինք ուղարկվելու Պարսկաստանի ՇԻՐԱԶ քաղաքը:

Ցավակցական

Այսու մեր խորին վշտակցությունն ենք հայտնում մեր շատ սիրելի Տիգրանին իր կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝ իր սիրեցյալի

Հասմիկ Սարխոշյան՝ Ղարախանյանի

ցավալի մահվան կապակցությամբ:

Թամ, Ալվարդ, Ծաղկուշ եւ Ռիմա
Ղարախանյաններ Սիրաքիներ

Ցավակցական

Այսու մեր խորին վշտակցությունն ենք հայտնում թերթիս բարեկամ Տիգրան Ղարախանյանին իր կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

Հանգուցյալ տիկին Հասմիկի

ցավալի մահվան կապակցությամբ:

Լույս-ի խմբագրություն

Ցավակցական

Այսու մեր խորին վշտակցությունն ենք հայտնում

Հանգուցյալ
Մարտիրոս Փանոսյանի

ցավալի մահվան առաջին տարելիցի կապակցությամբ:

Լույս-ի խմբագրություն